Հավելված N2
«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և
սպորտի հայկական պետական ինստիտուտ»
հիմնադրամի ռեկտորի 2016թվականի
հոկտեմբերի 31-ի N 39 հրամանի

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՌԵԿՏՈՐԱՏԻ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. ,,Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ,, հիմնադրամի (այսուհետ՝ ինստիտուտ) ռեկտորին կից խորհրդակցական մարմին է, որը գործում է ինստիտուտի կանոնադրությամբ, սույն կանոնակարգով իրեն ընձեռված լիազորությունների սահմաններում և գիտական խորհրդի նիստերի միջև ընկած ժամանակահատվածում քննարկում է ինստիտուտի գործունեությանը վերաբերող հարցեր և կայացնում համապատասխան որոշումներ:

2.ՌԵԿՏՈՐԱՏԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԿԱԶՄԸ ԵՎ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ

2.1. Ռեկտորատի նիստերը հրավիրվում են ամիսը մեկ կամ երկու անգամ: Ըստ անհրաժեշտության և հաշվի առնելով ծագած հարցերի կարևորությունը, կարող են հրավիրվել ռեկտորատի արտահերթ նիստեր:

2.2. Ռեկտորատի կազմի մեջ մտնում են ռեկտորը, պրոռեկտորները, ռեկտորի խորհրդականը, գիտական քարտուղարը, ուսումնական մասի վարիչը, գլխավոր հաշվապահը, ֆակուլտետների դեկանները: Ռեկտորատի որոշումները կենսագործվում են ռեկտորի հրամաններով:

2.3. Ռեկտորատին կից գործում է ուսումնամեթոդական հանձնաժողովը, որի կանոնակարգը հաստատվում է ռեկտորատում:

2.4. Խորհրդի և գիտական խորհրդի նիստերի միջև ընկած ժամանակահատվածում ռեկտորատն իր լիազորությունների սահմաններում քննարկում է ինստիտուտի գործունեության բոլոր ոլորտներին վերաբերող հարցերը, խորհրդի և գիտական խորհրդի որոշումների կատարման ընթացքը:

2.5. Ռեկտորատի նիստերը վարում է ռեկտորը, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտորը:

2.6. Ռեկտորատի նիստերի արձանագրությունները ստորագրվում են ռեկտորի և քարտուղարի կողմից: Ռեկտորատի նիստերի արձանագրության մեջ նշվում են նիստի

անցկացման ամսաթիվը, նիստին ներկա անձանց անվանացանկը, նիստի օրակարգը, օրակարգի հարցերի վերաբերյալ ընդունված որոշումները:

2.7. Ռեկտորատի նիստերում քննարկվող հարցերը պլանավորվում են յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբին: Հրատապ հարցերի քննարկումը կատարվում է արտահերթ նիստերում կամ լրացուցիչ կերպով մտցվում է հերթական նիստի օրակարգ:

2.8. Ռեկտորատի նիստերին անհրաժեշտության դեպքում հրավիրվում են քննարկվող հարցերին առնչվող ստորաբաժանումների ղեկավարներ, կոլեկտիվի անդամներ և ուսանողներ:

2.9. Ռեկտորի հանձնարարությամբ պարբերաբար ստուգվում է ռեկտորատի որոշումների կատարման ընթացքը, և արդյունքների մասին հաղորդվում է ռեկտորատի նիստում:

2.10.Ռեկտորատը՝

1) քննարկում է ինչպես պլանավորված, այնպես էլ ընթացիկ և հրատապ այլ բնույթի հարցեր,
2) քննարկում և կայացնում է որոշումներ ուսումնամեթոդական, մարզական, գիտական, ֆինանսական, տնտեսական, մշակութային, ինչպես նաև առանձին ստորաբաժանումների, այնպես էլ ինստիտուտի գիտական խորհրդի նիստերում քննարկելու համար:

3.ՌԵԿՏՈՐԱՏԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

3.1. Ռեկտորատը ընդունում է համապատասխան որոշումներ, որոնք կենսագործվում են ռեկտորի հրամանով:

3.2. Ռեկտորատի որոշումներն ունեն խորհրդատվական բնույթ և կարող են դրվել ռեկտորի կողմից կայացվող որոշումների հիմքում:

4. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

4.1.Սույն կանոնակարգում փոփոխությունները և լրացումները կատարվում են գիտական խորհրդի կողմից:

4.2. Ռեկտորատի գործունեությունը, իրավասությունների ժամկետները կարող են դադարեցվել նրա հետագա գոյությունը բացառող օրենսդրական փոփոխությունների կամ ինստիտուտի լուծարման և օրենքով սահմանված այլ դեպքերում: